«ԱՅԲ» ԴՊՐՈՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ, 2023

Այբ դպրոց

ՀԽ ձևավորման ժամանակացույց



ՀԽ կազմ և լիազորությունների ժամկետ

ՀԽ-ն ունի 12 անդամ:
Ձևավորվում է 7
դասային խմբերից



ՀԽ
լիազորությունների
ժամկետը 2 տարի է:

Նախագահն
ընտրվում է ՀԽ
կազմից՝ ձայների
մեծամասնությամբ

ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐ

Ռազմավարական բարերար

- առավ. 2 անդամ
- 1 մլն ԱՄՆ դոլար և ավելի

Խոշոր հովանավոր

- առավ. 2 անդամ
- 60.000 ԱՄՆ դոլարի խոստում՝ 2 տարվա համար

Հիմնական բարերար՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ

- առավ. 3 անդամ
- 12,000 ԱՄՆ դոլար և ավելի վերջին 2 տարվա ընթացքում

Շարունակական բարարար

- առավ. 2 անդամ
- 4,000 ԱՄՆ դոլար և ավելի վերջին 2 տարվա ընթացքում

Ռազմավար

- առավ. 1 անդամ՝ ՀԽ որոշմամբ
- 5 տարվա աշխատանքային փորձ կրթության ոլորտում

«Այբ» դպրոցի շրջանավարտ

- առավ. 1 անդամ
- «Այբ» շրջանավարտների ակումբի նախագահ

Ուսուցիչների խմբի կողմից ընտրված ներկայացուցիչ

- առավ. 1 անդամ
- «Այբ» դպրոցի գործող ուսուցիչ կամ կրթության ոլորտում առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

Առաջադրվելու համար՝ Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին վերջիններիս հիմնադրման պահից նվիրատվությունների ընդհանուր գումարը պետք է գերազանցի $1.000.000

2019 թ. ՀԽ ընտրություններից հետո՝ ՀԽ կազմի յուրաքանչյուր հաջորդ ընտրությունների դրությամբ, եթե տվյալ հովանավորի կողմից Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին նվիրատվությունները գերազանցում են $1.000.000

ԽՈՇՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Թեկնածուները պարտավորվում են համապատասխան ընտրությամբ ձևավորվող ՀԽ-ի գործունեության 2 տարվա ընթացքում «Այբ» համակարգի իրավաբանական անձանց՝ կանոնադրական նպատակների կամ «Այբ» դպրոցի համար, նվիրատվություն անել ոչ պակաս, քան $60.000

Տվյալ դասային խմբում յուրաքանչյուր անդամի ընդգրկելու վերաբերյալ ՀԽ-ն կայացնում է անհատական որոշում: Նվիրատվության պարտավորություն ստանձնելու կամ կատարելու փաստը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է խմբում ընդգրկվելու համար: Այս հարցով ՀԽ-ի որոշումը պարզաբանման և մեկնաբանության ենթակա չէ:

Ֆինանսական պարտավորությունը ամրագրվում է պայմանագրով: Նվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Դպրոցի, թե՛ հովանավորի համար, և միջոցները պետք ուղղվեն Դպրոցի կանոնադրական նպատակների իրականացմանը

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ

Այս դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար «Այբ» համակարգի իրավաբանական անձանց կատարած նվիրատվությունների ընդհանուր գումարը վերջին 2 տարվա համար պետք է կազմի նվազագույնը $12.000

Առաջադրված թեկնածուն պարտավորվում է Հխ գործունեության 2 տարիների ընթացքում Դպրոցին նվիրատվություն անել ոչ պակաս, քան $12.000

Այս դասային խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն նվիրատվություններ կատարել «Այբ» համակարգի իրավաբանական անձանց, 2 տարվա համար նվազագույնը $15.000

Ֆինանսական պարտավորությունը ամրագրվում է պայմանագրով: Նվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Դպրոցի, թե՛ հովանավորի համար, և միջոցները պետք ուղղվեն Դպրոցի կանոնադրական նպատակների իրականացմանը

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

Այս դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար «Այբ» համակարգի իրավաբանական անձանց արված նվիրատվությունների ընդհանուր գումարը վերջին 2 տարվա համար պետք է կազմի նվազագույնը $4.000

Այս դասային խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն նվիրատվություններ կատարել «Այբ» համակարգի իրավաբանական անձանց, 2 տարվա համար նվազագույնը $5.000

Ֆինանսական պարտավորությունը ամրագրվում է պայմանագրով: Նվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Դպրոցի, թե՛ հովանավորի համար, և միջոցները պետք ուղղվեն Դպրոցի կանոնադրական նպատակների իրականացմանը

ՌԱԶՄԱՎԱՐ

Թեկնածուները առաջադրվում և ընտրվում են նորընտիր ՀԽ-ի կողմից՝ ՀԽ-ի ձևավորումից հետո՝ 2 ամսվա ընթացքում

Առաջադրվելու համար՝ թեկնածուն պետք է ունենա առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ կրթության ոլորտում և ծառայեցնի այդ փորձը Դպրոցի զարգացման գործին

Որպես ռազմավար առաջադրվելու համար՝ թեկնածուն պետք է ունենա Դպրոցի զարգացման հստակ տեսլական, լինի մոտիվացված և կրթության զարգացմամբ ոգեշնչված անձնավորություն

https://unsplash.com/photos/mcLpPD36-2k

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

Այս խմբում ներկայացուցիչ անդամի լիազորությունները ի պաշտոնե ստանձնում է ««Այբ» դպրոցի շրջանավարտների ակումբ» ՀԿ-ի նախագահը:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Որպես ուսուցիչների խմբի քվեարկողներ կարող են ընդգրկվել ընտրության պահին «Այբ» դպրոցի (տարրական, միջին, ավագ) ուսուցիչները, նախագծային ուսումնառության ակումբների ղեկավարները, դասղեկները, դասարանների պատասխանատուները

Առաջադրվելու համար՝ անձը պետք է հանդիսանա «Այբ» դպրոցի (տարրական, միջին, ավագ) գործող ուսուցիչ կամ կրթության ոլորտում ունենա առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ

ՀԽ

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

գործընթաց

01. Յուրաքանչյուր դասային խմբերի շրջանակներում քվեարկության մասնակիցների վերջնական կազմը հաստատվում է ՀԽ կողմից:

02. ՀԽ անդամ չեն կարող ընտրվել Դպրոցի տնօրենները և Մանկավարժական խորհրդի անդամները : Դպրոցի այլ աշխատողները (օրինակ՝ ուսուցիչներ) կարող են ընտրվել ՀԽ անդամ:

03. Մինչև հոկտեմբերի 17-ը կա հնարավորություն լրացնելու նախընտրած դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար պակասող գումարը:

04. Եթե թեկնածուն բավարարում է 1 կամ ավելի դասային խմբերին ներկայացվող պահանջների, որպես քվեարկող մասնակցում է դասային յուրաքանչյուր խմբի կազմում, իսկ որպես ընտրող՝ 1 դասային խմբում՝ իր նախընտրությամբ:

05. Յուրաքանչյուր դասային խմբերի շրջանակներում քվեարկության մասնակիցների վերջնական կազմը հաստատվում է ՀԽ կողմից

06. Յուրաքանչյուր դասային խմբում թեկնածուները կարող են ինքնաառաջադրվել կամ առաջադրվել համապատասխան դասային խմբի որևէ քվեարկողի կողմից՝ **հոկտեմբերի 22-27-ը**

ՀԽ

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

գործընթաց

07. Տեղեկացվում է լայն համայնքը: Ուղարկվում են նվիրատվությունների անհատական պատմությունները՝ հաստատման:

08. Դպրոցի կայքում հրապարակվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ավելին՝ https://aybschool.am/am/page/bot%20elections_2023

09. Անհատական նվիրատվությունների գումարի հաստատումը՝ մինչև **հոկտեմբերի 6-ը**

10. ՀԽ-ն հաստատում է յուրաքանչյուր դասային խմբում ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԻ ցանկը՝ ստուգելով չափանիշներին համապատասխանությունը

11. Յուրաքանչյուր դասային խումբ ստանում է իր անդամների կազմը: Խմբերը կարող են կազմակերպել ներքին քննարկումներ

ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ՝

Ռազմավարական բարերար, Խոշոր հովանավոր, Շարունակական բարարեր, Հիմնական բարերար՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ

- Բոլոր քվեարկողներն ունեն այնքան ձայն, որքան տեղեր են նախատեսված այդ դասային խմբի համար Հխ կազմում և բաշխում են իրենց ձայները տարբեր թեկնածուների միջև՝ յուրաքանչյուր թեկնածուին ոչ ավել, քան մեկ ձայն համամասնությամբ:
- Հաղթող են ճանաչվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները:
- Ռեյտինգային ընտրությունը միափուլ է, փակ:
- Միևնույն դասի շրջանակներում հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև կազմակերպվում է վիճակահանություն

ԵՐԿՓՈՒԼԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ՝

Ուսուցիչների խմբի կողմից առաջադրված ներկայացուցիչ

- 1-ին փուլում յուրաքանչյուր քվեարկող իր նախընտրությունները բաշխում է առավելագույնը 3 թեկնածուի միջև՝ բալային համակարգով: Բալային համակարգում 1-ին նախընտրելի թեկնածուին տրվում է «10» բալ, 2-րդ նախընտրելիին՝ «8» բալ, 3-րդ նախընտրելիին՝ «6» բալ:
- 2-րդ փուլ են անցնում 1-ին փուլում առավելագույն բալեր հավաքած 2 թեկնածուն: Հավասար բալեր հավաքած թեկնածուների միջև կազմակերպվում է վիճակահանություն
- 2-րդ փուլում յուրաքանչյուր քվեարկող իր միակ ձայնը տալիս է 2 թեկնածուներից մեկին:
- Հաղթող է ճանաչվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- Հավասար ձայներ հավաքելու դեպքում կազմակերպվում է վիճակահանություն:

ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Յուրաքանչյուր ընտրված թեկնածու գրավոր ընդունում է Էթիկայի կանոնների բոլոր դրույթները՝ ստորագրելով դրանց՝ իրեն հանձնված օրինակը
- Գործող ՀԽ-ն հաստատում է նոր ՀԽ կազմը՝ հիմք ընդունելով ընտրությունների արդյունքները, թեկնածուի կողմից ստորագրված փաստաթղթերը, ստորագրված նվիրատվության պայմանագրերը
- Դպրոցի ներդասային ընտրությունների կանոնակարգը հաստատված է Դպրոցի ՀԽ կողմից: Դրա հետագա փոփոխությունները կատարվում են Դպրոցի ՀԽ որոշմամբ:
- Դասային խմբերից յուրաքանչյուրով առաջադրվող թեկնածուն տեղեկացված է առ այն, որ և որպես քվեարկող, և որպես թեկնածու առաջադրման/դիմումի ժամկետները խախտելը հանգեցնում է համապատասխան ցուցակում չընդգրմանը, որը ենթակա չէ բողոքարկման:
- Կանոնակարգով չկարգավորված հարցերը լուծվում են Դպրոցի կանոնադրությանը և ՀԽ որոշումների համաձայն:
- Կանոնակարգով և Էթիկայի կանոններով սահմանված դրույթները և պարտականությունները ՀԽ անդամի կողմից խախտելը կարող է հանգեցնել ՀԽ տվյալ անդամի հեռացմանը ՀԽ կազմից:

ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարերար/հովանավոր եզրույթը կարող է նշանակել նաև համատեղ կյանք վարող ամուսիններից որևէ մեկը՝ անկախ նվիրատվությունը որևէ մեկի անունով կատարելու հանգամանքից, եթե բարերարը գրավոր ցանկություն է հայտնում , որպեսզի իր կինը կամ ամուսինը նույնականացվի իր հետ և կրի համահավասար, նույնաբովանդակ իրավունքներ և պարտականություններ: Նրանցից որևէ մեկը կարող է սույն կանոնակարգով սահմանված բոլոր դասային խմբերում հանդես գալ որպես քվեարկող:
- Բացի «Այբ» կրթական հիմնադրամից, «Այբ» դպրոցից և Դիլիջանի կենտրոնական դպրոցից՝ «Այբ» համայնքի մեջ ներառվել է նաև «Ինքնություն և արժեքներ» հարթակը: Կարգով սահմանվել է, որ ընտրական ցուցակները կազմելիս հաշվի են առնվելու համակարգի բոլոր կառույցներին տրվող նվիրատվությունները:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ